

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAIRE



ՊԱՏՄԱՆՔ

ԵՊԻՓՈՏՈՍ

Տարեկան գրե. ուղ. 30

30

ԱՐՏԱՍՏՆԱՆ

Տարեկան գրե. ուղ. 10

10

Փաստագրի 3 ՅԵԼՈՒՄ ցերեք փոխառելի վճարում է գրե. ուղ. 10 րոպե.

Ձի հրատարակումը ձեռագիրները եւ չի'ն սրտի :

Քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածում հասարակական կյանքի վերականգնման համար անհրաժեշտ է համապատասխան քաղաքացիական կյանքի վերականգնումը :

Քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածում հասարակական կյանքի վերականգնման համար անհրաժեշտ է համապատասխան քաղաքացիական կյանքի վերականգնումը :

Քաղաքացիական պատերազմի ժամանակահատվածում հասարակական կյանքի վերականգնման համար անհրաժեշտ է համապատասխան քաղաքացիական կյանքի վերականգնումը :

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շ Ա Բ Ա Ր Ա Ր Ե Ր Բ

Թե՛ ԱՐՇԱՆՈՍԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ նկարահան խնդրոց համար պէտք է շիտեղ համարադրեալ հասցեով քերթիս Մասնատարարին, որ կ'...

ԿԵ ՇՐԱՏԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի մատուցանու- սու ձեռքով յանձնելու

ZUSC 20 ՓՄԱ ՈՂԱ

Չ Ե Կ Ո Ւ Յ Ո Ւ Մ

Յօդուածագիրներէն յատկապէս կը խնդրուի իրենց գրութիւններուն մէջ յատուան բացատրութիւններէ զգուշանալ եւ պատշաճութեան սահմաններէն չի չեղիլ, եթէ չեն ուզեր որ իրենց աշխատութեան արդիւնքը լոյս տեսնելու իրաւունքէն չ'զրկուի իՄԲ.

ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՐԴԻՒՆԲ

«Արշալոյս»-ի նախորդ թուով արտագրուած խմբագրական յօդուածը - Հոգիներու այլանդակումը - շատերու մտքին վրայ զօրեղ տպաւորութիւն մը թողուցած եւ ազդու հիասթափում մը առաջացուցած է:

Ասուլիներու տղանց մը շքուղան ըրած է շատ մը կէտերու վերայ, ու շատ մ'ալ բաներ յիշեցուցած է ոմանց. ստանք պիտի սիրէին մուսուլմանի քառսին մէջ խառնաշփոթուած տեսնել միաբերը ուղղութեան հրաւիրող այդ բառերը, իւրաքանչիւրը իր պատշաճ տեղին ու գէրքին մէջ գործածուած:

Աննշան միսթարութիւն մը չէ՛ մեզի համար: Երբ մեր ունեցած տեսակցութիւններուն շարքին մէջ կը հանդիպինք խարդաւանանքներէ մուլտրած միտքերու, եւ միանգամայն կը հաստատենք որ այդչափ յստակատես գրութեան մը պարտնակութիւններէն ազդուած, ճշմարտութիւններ խոստովանելու պատրաստաւ կամութիւն ցոյց կը տրուին:

Ամենէն դժուարին բանը աշխարհի վրայ, ճշմարտութիւնը քոչածածկելու համար խղճի դէմ եղած մաքաւումն է...

Մենք անոնցմէ չենք ուզեր ըլլալ, եւ չենք կրնար քաջալերել ա'յն պիտիներ, որոնք տխրառիթ պատահականութիւնները շահադործելու միտումներ եւ արտօրակ ունին: Աւժանակն սարսափի մը մէջ պահելով միտքերը՝ զանազան ձեւերու տակ, եւ խաբկանքներու զաղբալի պատնէշին ետեւը ապատանաձէ՛ հոգեբանական թոյլ վիճակ մը ստեղծել փար-

ձած են ու կը ժողովուրդէն, միայն ու միայն նիւթական տնտեսութիւններու գոհացում գտնելու յոստով: Նորութիւն մ'էր սա արդարեւ՝ որ վերջին մէկ երկու տարիներու ընթացքին մէջ, մէկ քանի նորահասներու հետ նեղուի արանց վրայ որ շանալ փորձեց, բայց շատ չ'անցած ողջամիտներու արհամարհանքին առջև տեղի տալով, ասուպի նման անհետանալու վրայ է մեր հորիզոններէն, առանց փայլուն հետքեր թողելու...

Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ե Ր

ՆԻԻԹԱԿԱՆ ՏԱԳՆԱՊ

Ժամանակէ մը ի վեր, եգիպտոսի ժողովուրդին ամէն խաւերուն մէջ ալ, ըլլա'յ կալուածատէր, ըլլա'յ վաճառական, պաշտօնեայ, գործաւոր ու մանրավաճառ, խոսակցութեան միակ նիւթը քայցրուէնի արմաւենիքն է եւ Բուրջերու երկրին մէջ տիրող նիւթական տագնապի մասին է:

Աշխարհի աստուածը, - գրամը-ժպտելէ խոյս կուտայ, ու նոյն իսկ երես կը դարձնէ կ'ըսեն, ամէն դասակարգի, սեպի եւ տեսակի մարդոց քառսիններուն մտայնի ըլլալէ:

Կը տեսնու վաճառական մը՝ իր սրտը եւ սիրտակն ծախքերը ընկու հարկադրուել, ձեռքը ձեռքին վրայ դրած մրտիկու պէս բան մը կ'ընէ. մի՛ հարցնիր պատճառը, քիչ կայ...

Քիչ մը անդին ուրիշ առեւտրական մը անցեալ փայլուն օրերը երազելով ժամանակը կ'սպաննէ. հարկ չ'կայ բան մը հարցնելու. քիչ կայ...

Աւելի հեռունը թղթավաճառի կրպակ մը կայ, ուր ի՛նչ գրուած ապրանքները փոքր քանակութեամբ կը վաճառուին, սակայն քիչը մինչեւ հոն ալ իր անողոր ձեռքերը երկարած է: Այս վերջնոյն եւ առաջիններուն մէջ եղած տարբերութիւնը հո'ն կը կայանայ միայն, որ սա՛ քիչը չիտակ արտասանելու վարժուած չէ տակաւին...

Իրականութիւններու հանդէպ կը

դանուինք վերջապէս. եգիպտոսի մէջ արդարեւ կը տիրուպէտէ նիւթական տագնապը: Պատճառը:

Օրը օրին Եւրոպական կարեւոր թերթերու առեւտրական եւ տնտեսական բաժնիները պրպտող անհարկներուն՝ Ռուս Տէրօրխոյններու մեծագործութիւնները եւ պարբերական բապանութիւնները, ուժանակի պայթումներն ու գրամապանակի գայթակումները չեն որ կը հանդիպին առաջին անգամ, այլ աշխարհավար գեղնորակներուն վրայ իշխող մեծամեծ գրամատուներու մանկութիւնները, աչք պատուող միլիոններու ընդհանր իրենց խոշոր գանձերը գոյցած ըլլալուն յայտարարութեամբը:

Ինտիկն էր որ աշխարհի ամէն կողմին ու պիտի տարածուէր պայտագրութիւնը այս գէպքերէն առաջացած նիւթական տագնապին. ու եգիպտոս ալ ազատ չէ մնացած ատենէ մը ի վեր նիւթական պակասութեան պատճառով սուր ժորմութէն, եւ հրապարակային խոսակցութեան նիւթը միայն անոր շուրջը կը դառնայ իրաւամբ:

Մերտնէնց այս պատճառաւ կըրած ցնցումը սակայն՝ անդարմանելի կոչուելու հանգամանքներէն զուրկ ըլլալու է, որչափ թոյլ կուտայ մեզի կարծել՝ իրականութիւնը:

Աչքի առջև ունենալով եգիպտոսի գաղութը, իրենց ստորաբաժանումներով գլխուոր երկու գասակարգի կրնանք բաժնիլ զայն. գրամատուէր - առեւտրական, եւ արհեստագործ ու պաշտօնեայ:

Հրապարակին վրայ տիրող գրամական տագնապին ամենէն շատ ըզգալի փաստ կրողները մեծ առեւտրականները կրնան ըլլալ, իրենց վերջին եւ գործին պահանջներուն բերմամբ ուրեւուր ընդարձակ յարաբերութիւնները հաստատած ըլլալով այս ու այն կողմ: Իսկ մնացեալները իրենց պահեստի գուժարներէն չէ որ վրայ պիտի տան, այլ իրենց առօրեայ գործերը պիտի տուժեն միայն. հետեւաբար այս վերջններուն համար նիւթական տագնապին հարուածները կարծուածին չափ ծանր չեն կշռեր պիտի կրնանք ըսել. իսկ պաշտօնեաներուն գաղթը՝ անոնց պիւտածէն պատրաստուած է. իրենց որոշեալ ամսավոյշները ունին այլ եւ այլ

կարեւոր ու անկարեւոր հաստատութիւններու մէջ, եւ ասով իրենց սովորական ապրելակերպին վրայ փոփոխութիւններ չեն մտցնիր եթէ ուզեն, առանց չափազանց մտահոգութիւններու ներքեւ ընկնուած ըլլալու հրապարակը ցնցող տագնապին պատճառաւ:

Այս մեզմայրուցիչ պարագաները առաջի առնելով հանգերէ, չենք կրնար ըսել թէ առեւտրական աշխարհին մէջ մեծ կամ փոքր տեղ մը գրաւուինք՝ ընդհանուր նեղ կացութիւնէն իրենց բաժին ինկած մասը վերցնելով, մտահոգութեանց պատճառներ չեն ունենար «կրակը ինկած տեղը կ'այրէ կ'ըսեն»:

Յուսահատելու պէտք չկայ ամէն պարագայի մէջ: Եգիպտոսի տնտեսական մեծ տնտեսագէտները եւ գրամատէրները այս պահուստ իրենց շքանակներուն մէջ հրապարակը տագնապող կացութեան վերջ մը դընելու վրայ կը մտածեն, գիտնալով որ այս կացութիւնը ազոպայ ծանր հետեւանքներ ալ կրնայ ստեղծել եւ գիպտոսի համար:

Տեղական բոլոր թերթերն ալ գրեթէ առ հասարակ կ'ըզային արգի տնտեսական տագնապով եւ առնուած նորմոր տեղիկութիւնները յուսարար ըլլալէ հետէ չեն:

Անցեալ օրեր Եւրոպական թերթի մը Խմբագիրներէն մին խնդրոյ առարկայ տագնապին եւ անոր տեսականութեանը ու պատճառի թղթաւորներու մասին սրտը եւ յստակ գաղափար մը տեսնելու համար, քողաքիս մեծանուն տնտեսագէտներէ միոյն կարծիքը հարցուցած է, եւ իր թերթին միջոցաւ ընթերցողներուն կը հաղորդէ իր տեսակցութեան արդիւնքը:

Յիշեալ անձը՝ իբր տնտեսագէտ իր վայելած հարգաւին համապատասխանող գիտակցութեամբ մը կը ցրէ ենթագրական արհամարիքները տիրող տագնապին, ու իբր գարման կը յուսայ թէ՛ բաւական պիտի ըլլայ Անկլո - եգիպտական կառավարութեան հոգածու մէկ անհարկը, իր ձեռք գտնուած միջոցներով, նիւթապէս գիւրացնելով կալուածատէրներուն ու առեւտրականներուն սկսած պայքարը նիւթական տագնապին դէմ: Եթէ համբաւաւոր եւ մեծա-

հարուստ ելևմտագետին այս յոյսերը քաջալերութիւն գտնեն Եգիպտական կառավարութեան կողմէ, շուտով պիտի վերջ գտնեն արդի տնտեսական տաղանակին դէմ միահամուռ յոյսնուած տրտունջները, և այն ատեն՝ այդ տարածաշրջանները պատրուակ և հիմ բռնուելով եղած սրնանկութիւնները աւելի խուզարկու աչքերով քննութեան և նկատողութեան պիտի առնուին տիրոջ իշխանութիւններէն:

Ֆ.

ԿԵԱՆՔԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՂ

Ե.

Տեսնա՞ք օտարին կեանքը, բայց ի՞նչ է հայուն կեանքը Գահիրէի մէջ: Քիչ մը ընդարձակ առումը կարելի է ըսել թէ Գահիրէի մէջ ընկերային ընտանեկան կեանքը շատ սաղմնային վիճակի մէջ է. ընտանեկան կեանքը սեղմ, իսկ ընկերային կեանքը միայն հոս ու հոն սրճարաններուն անկիւնը պատահական հաւաքումներու մէջ կը կայանայ: Ունինք ընթերցատուն մը որ, առ ի չզոյէ լաւագոյնին, ամէն բան է - թէ՛ Ընթերցատուն է, թէ՛ Լսարան և թէ՛ ժողովավայր: Այսու հանդերձ պատահական երեկոթներ, պատահական շարժումներ կ'ունենանք: Երբեմն կաւկասէն գերասան մը եւ կամ գերասանուհի մ'է որ կուգայ, Կարպաղի Մասնախումբ մը կը կազմուի սոմսակներու զետեղման համար, իսկ եթէ « Ինտէլիգենս » մ'է այդ եկողը « Ենթակոմիտէն » է որ իրար կ'անցնի: Կը մեկնի գերասանը, կը մեկնի գործիչը, եւ Գահիրէ կը մտնէ իր նախկին մեքուքութեան մէջ:

Եւ թէպէտ շարժումը կը պակսի, բայց միւս կողմէն ուրախութիւն երեւոյթ մ'է որ հոս ամէն հայ իր զբաղումը ունի, եւ մինչդեռ օտար մտերացկաններ պատկանելի թիւ մը կը կազմեն, կարելի է մինչեւ աստիճան մը ըսել թէ՛ հայ դատարկագործի մը չ'ես հանդիպիր, ասիկայ ամէն կերպով պատուարք է եւ յայտարար մէկ նշանն է մեր ցեղին տոկոսն աշխատող նկարագրին:

Տեղական հայ թերթերուն մէջ ամենէն լայն տեղը կը զբաւեն տեղոյս ազգային վարժարանի եւ Առաջնորդարանի շուրջ անցած դարձած խնդիրները: Առանց անասելու այսօրինակ խնդիրներու կարեւորութիւնը, ցաւալի է սակայն դիտել թէ՛ շատ անգամներ հասարակութիւնը շատ աւելի կը զբաղի դաստուարի մը խնդրովը քան թէ անդին հայրենիքին մէջ անցած դարցած կենսական հարցերովը:

Զ.

Ասկից տասնեակ տարիներ ատալ տեղոյս ազգային կեանքը ներկայիսն ըրողովին տարբեր էր:

Հայուն իր գտնուած միջավայրին պահանջներուն յարմարելու ճկուն բնաւորութիւնը առաջնորդած է զինքը դիւրաւ ձուլուելու գերիշխան տարրին հետ: Հեղինակ մը իրաւամբ դիտել տուած է թէ հայերս հեղուկ մարմինի կը նմանինք, ինչ ամանի մէջ որ դրուինք յոյն ամանին ձեւը կ'առնենք:

Եւ երբ 1896ի երկրորդ կիսուն առաջին անգամ ըլլալով ոտք կը կոխէի փարաւոններու այս երկիրը ասոր մէկ սպացոյցը կը տեսնէի հոս՝ Գահիրէի մէջ: Եւ արդարեւ, իրբեւ ազգային հաստատութիւն, ըլլա՞յ ազգային գոյութեան պահպանմանը ստատորոգ, ըլլա՞յ հայ գաղութը յաջ սօտարին ներկայացնող ի՞նչ

ունէինք: Ազգային վարժարան մը խնդճ ու կրակ, այն ալ հաստատուած անուս լայց պատուական հայու մը կտակովը - Վանեցի աղա Կարապետ Գալուստի: Ընկերութեան սրճարան մը, որ կը պոնրուէր խառն դատարանաց դէմ հիմն վստահատան վերածուած: Եւ Ակումբ մը, աւելի ծանօթ հայկական գլխաւորութեամբ, Էջպէքիէի հանրային պարտէզին հանդիպակաց կողմը:

Այն տեսակ ժամանակ մը որ հոս ու եւէ հայերէն թերթ գոյութիւն չ'ուներ, այդ հայկական սրճարանը ամէն ինչ էր: Հոն երբեմն պատէն կ'ստուած կը տեսնուէր օրուան հեռագիրներուն քով մահազգեր, շահասիրական ընկերութեանց հաշուեկշիռներ, վարժարանին քննութեանց ժամանակացոյցերը: Ուեւ հայու մասին տեղեկութիւն առնելու համար բաւական էր սրճարանագետին դիմելը:

Իսկ Գլխաւոր:

Գահիրէի այն ժամանակուան հայերը ազգայնութեան տեսակէտով կարելի է երեք դասակարգի բաժնել - Ֆէլլաւհայած հայեր, Եւրոպականացած հայեր եւ հայ մնացող հայեր: Առաջինը արաբախօս եւ ձուլուած տեղական տարրին հետ Երկրորդը աւելի ֆրանսախօս, անսակ մը աշխարհաքաղաքացի, հայէ զատ ամէն բանի նմանող, եւ միջթարական երեւոյթը որ կար այս ընդհանուր ձուլումին մէջ այն ալ սա էր թէ՛ կային նաեւ խուլ մը հայեր, թուով ցանցառ, աւելի Կ. Պօլսեցի եւ Իսթիքի, որք եւրոպական ընդհանուր մշակում մը ունենալով հանդերձ, գուրգուրանքով մը կ'առնած կը մնային իրենց մայրենի լեզուէն և կը շահագրգռուէին ազգին շուրջ անցած դարձածովը: Ահա այն աստիճանուան Գահիրէի այս հայ մտաւորականութիւնն էր որը հաստատած էր գլխաւոր:

Այս գրիթէ օտարացած հայերուն մօտաւոր եւ վերջնական կորուստը ըստոյց էր եթէ թուրքիայէն զաղթականութեան հոսանքը չի գար չի ցնցելը զիրենք: ՅՅէն Ի վեր զգալի փոփոխում մը տուալ եկած է, հին թմրութիւնը մնացած չ'է այլեւս. Առաջնորդարանի, վարժարանի, Մամուլի շուրջ յուզուած խնդիրներ - որոնց շատերը թէպէտ մասնակի եւ վտիտ շահեկանութիւն ունեցող - ցոյց կուտան սակայն շարժում մը որ կ'եւանքի նշանն է:

Այն ատեն ունէինք Ֆէլլաւհայած հայեր, « խավակա Վանիսներ » խավակա կարկուրներ, հիմա ատոնց թիւը երթալով նուազած է. բայց եթէ զաղթականութեան հոսանքը կ'ստեղծուէր, պէտք է աւելցնել նաեւ թէ՛ ատի լոկ ժամանակաւոր է, եւ եթէ փոյթ չի տարուի ազգային դատարարականութեան գործին, մէկ սերունդ վերջը պիտի վերսկսի այդ ձուլումը:

(Շարունակելի)

ՅՍՐ. Լ. Ս. ՇԱՄԼԵԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՄԱԼԵԹ

Հետեւեալ գրութիւնը դիտուած եւ մեզի հրատարակուելու խնդրուած է:

Ժամանակի ժամիքներն արհամարհող անզուգական վիճակներու մը օտուած սոյն թատերախաղը, անմահն Շէյքսպիրի վուլսի գործոցը ըլլալէ զատ, աշխարհի բոլոր թատերգութեանց զիցուհին կոչուելու արժանացած է:

« Համլէթ » ողբերգութեան մէջ միայն կրնաս ըմբռնել, արուեստի բազմազան նրբութիւնները եւ վիճակները: հոգիտ է որ կ'զգայ, կը հրճուի, կը վեպելտի, հոգիտ է որ կը ճանչնայ ար-

ուեստակէ: Կարողութիւնը եւ արժանիքը, հոս է բեմական արուեստի բարձրարժեք կայանը, եթէ արուեստագէտը յաջողի մինչեւ հոն հասնիլ, առանց սակայն յոգնաբեկ վար իշխալու, ջանջախուած եւ ընկճուած:

Եգիպտոսի արդի թատերասէր հայութիւնը հիմայ է որ Համլէթի իսկական ներկայացման ականատեսը կ'ըլլայ, շնորհիւ Տիկին Սիրանուշի, որուն Եգիպտոս ժամանելը մեծ բաղաւորութիւն մ'է Եգիպտոսի Հայութեան:

Համլէթի գեր Տիկին Սիրանուշ կատարեց լաւ եւ յաջողակէս. կը շնորհաւորեմ զինքը: Արդարեւ զիւրին չէ նախ սեռը կեղծել եւ ապա յաջողակէս կատարել զեր մը՝ այսչափ բաղաւորակէս անողը եւ տարամերձ: Սակայն յարգելի Տիկինը՝ հաւանական ամէն դժուարութիւններու ալ յաղթեց, ու կրցաւ ազնուական կրիտատարողը - Համլէթը - հանդիսանալ, աչերու տխրանուշ սարսուռը, հոգեոյն զալկահար հառաչները, երկչոտախառն վարանումները, քաղցր ու մեղամղձոտ առողջութիւնը անթերի էին, եւ ասոնք են որ բեմ վրայ Համլէթի ճշգրիտ տիպարը կրնան ներկայացնել:

Պ. Անգրանիկ՝ ինչպէս ամէն դերերու, նոյնպէս Բոլոնիոս եւ զերեղմանափորի զերերուն մէջ իստ յաջող հանդիսացաւ: Տիկին Սիրանուշէն անմիջակէս ետք կրնանք զինքը շնորհաւորել: Դէշ չէր Պ. Աղաբեկեան բեմական դերասանի, Պ. Բերտան՝ Լէյարիսի, Պ. Երամեան՝ Կաղաւթի դերերուն մէջ, նոյնպէս յաջող էին Տիկին Ազնիւ՝ Թագուհոյ եւ Տիկին Ստեփանեան մանաւանդ շատ փայլուն կատարեց Օֆելիայի դերը: Պ. Ստեփանեան քիչ մը աշխոյժ պէտք էր որ դէտէ՛ Համլէթի ընկեր Հորացիոի դիրին մէջ, Աւելի լաւ պիտի ըլլար, կը կարծենք, եթէ Հոովմէացի աւելնոտ երիտասարդին գերը ուրիշ մը ստանձնէր:

Հայ բեմը իր շքեղ անցեալը կորսնցնելէն ետքը, անա Տիկին Սիրանուշ՝ հերոսուհիի վեհապանձ տեսքով, կը ճգնի վերականգնել բարոյական դպրոցի վեմ տաճարը: Ամէն հայ պէտք է քաջալերէ դանի, որպէսզի իրականացնի կարենայ իր պաշտելի գաղափարը:

ՍԵՐ ԳԱԼԷՄՅԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԱՂԱՄԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Արդէն պատմութիւններու ամենէն հետաքրքրականները վայլուն աղամանդներուն շուրջը, վրան, և կամ քովը հիւսուած են միշտ. . . այն գերազանց պատճառաւ որ այդ մարդիկ աղամանդալարը օղեր չեն դորձած եր:

« Ժուռնալ Տիւ Գէն » ի մէջ հետեւեալը կը կարդանք:

Ժամանակ առաջ, Գահիրէի մէջ ալ ծանօթ Բարիլյի գոհարաւաճառ մը, Պ. Լաղոշ, Ռից պանդոկը իլեւանած մեծահարուստ Նէճիպ Բաշային աղամանդակուռ մանեակ մը նուիրել կուզէ, որ այս վերջինը կը մերժէ ընդունիլ:

« Ինչ յետոյ » Նէճիպ Բաշայի իջևանած պանդոկէն տուն մը կը փոխադրուի և պանդոկին այն բաժնին մէջ ուր բնակած էր, սպասուորը քսան և մէկ աղամանդի քարերով շինուած զարդ մը կը գտնէ և Տիկին Նէճիպ Բաշայի սենեկապանու-

հին, Ժիրարտօին, կը յանձնէ:

Օր. Ժիրարտօ ծախելու դիտարութեամբ « Ռիւ Տը Լա Բէի » գոհարաւաճառներէն միոյն կը ներկայացնէ աղամանդակուռ զարդը, որ կասկածներու երթալով հարցում, ներկուզէ սպասուհին և վերջապէս կը տեղեկանայ որ այդ աղամանդները Պ. Լաղոշի կը վերաբերէին և իրենք անկէ ստացած են:

Օր. Ժիրարտօին գալով՝ Եգիպտոս կը վերադառնայ:

Եթէ Օրիորդ Ժիրարտօ Եգիպտոսի մէջ կը գտնուի հիմայ և եթէ մեր այս տողերը կը կարգայ, կ'ընէ « Ժուռնալ Տիւ Գէն », անշուշտ ցաւօք սրտի պիտի տեղեկանայ թէ՛ ի բացակայութեան իրկու տարի բանտարկութեան դատապարտուած է Սէնի ոճրագատ ատենին կողմէ, իսկ Նէճիպ Բաշա՝ պատասխանատու ճանչցուած:

Միւս կողմէ Պ. Լաղոշ, տեսնելով որ իր աղամանդներէն երկուքը փոխուած են, 18000 ֆրանկ վստահատոնցում կը պահանջէ, բայց դատարանը այս մասին իր որոշումը տալէ յառաջ, գնահատող մը (expert) նշանակած է Պ. Լաղոշի վստահ քանակը ճշգրտու համար:

Ահաւասիկ « Փանթէզի » դատաւարութիւն մը:

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ԼՈՐՐՅԵ

ՄԱՀԱՌՈՒԺ

Աղէքսանդրոյ Ազգ. Առաջնորդարանէն մեզ զրկուած Մահազգէ մը կը տեղեկանանք թէ՛ Երուսաղէմի միաբաններէն Գեր. Տէր Վահրամ վարդապետ Աղաբեան ամսոյս 22ին վախճանած է Աղէքսանդրոյ իր բնակարանին մէջ, ի հասակի 55 ամաց:

Հանգուցելոյն օժման և յուշարկաւորութեան արարողութիւնները, նախագահութեամբ Եգիպտոսի վիճակին Առաջնորդ Գեր. Աղաւնունի Հայր սուրբին, կատարուած են Յունուար 25ի Շարաթ օրը, առաւօտեան ժամը 10ին:

Հանգուցեալ վարդապետը տարիներէի վեր ո՛չ միայն Աղէքսանդրոյ եկեղեցոյն մէջ կը պաշտօնավարէր, այլ և Աղէքսանդրոյ Սաղիմական կալուածներուն վրայ տեսուչ կարգուած էր, և կարծենք՝ իր օրով Աղէքսանդրոյ մէջ ծախուած Երուսաղէմի սեփական գեախներուն աժանակին վաճառմամբ, իրազէկ անձերու իրուսացի քննադատութիւններն ալ իր վրայ հրաւիրելու պատճառներ տուած էր:

Բայց քանի որ դապաղի մը հանգէպ կը գտնուինք « Արշալոյս » ի խմբագրութիւնը, ի պարտաւորութենէ կը նկատէ իր ցաւակցութիւնները արտայայտել Աղէքսանդրոյ Ազգ. Վարդութեան, Գեր. Առաջնորդին և Հանգուցեալին համակող ժողովրդեան և մասնաւորապէս քերովը ալլկան Օրիորդ Սիրանուշին,

որ մէկ տարուան մէջ մահու անո-  
գոք մանգաղին հնձած իր երկու սի-  
րելիները կողքայ այս պահուս, - մօրը  
և մօրեղբօրը, - որ իրեն համար  
ճշմարտ և գուրգուրոտ հայր մը  
եղած էր :

ՄԻՋԱՂԵՊԸ

Գահիրէէն թղթակից մը, - չենք  
գիտեր պատահական թէ մասնա-  
ւոր. - 907 Դեկտ. 11 թուակիր զը-  
րութիւն մը ուղղելով Ամերիկայի  
ԱԶԳ Եւրոպայի թերթին, տխուր մի-  
ջադէպ մը կը պատմէ, որուն զը-  
խաւոր գիծերուն ծանօթ են արդէն  
չատ մը գահիրէնական ազգայիններ :

Ինչպէս ծրագրուած սպաննու-  
թեան մը շուրջը կը դառնայ, և  
Ազգային թղթակիցը՝ Չարէհ և Չա-  
լապ անունով երկու անձերու վե-  
րագրելէ յետոյ, սճրագործական  
այդ արարքը, ատոնց իբրև թե-  
լադրիչ կը ներկայացնէ Մ. է. Ֆ. Ան-  
դրանիկեանը :

Արշալոյսի ի խմբագրութիւ-  
նը լսած է թէ՛ արգարիւ Դեկտեմ-  
բեր ամսոյ մէջ եգիպտական կառա-  
վարութիւնը վերոյիշեալ երկու ան-  
ձերը հարցաքննութեան ենթարկած  
է խնդրոյ մը համար, սակայն այդ  
մասին իր ստացած անգիտութիւն-  
ները անբաւական նկատելով՝ անով  
զբաղելու գիտաւորութիւնը չ'ունե-  
ցաւ. իսկ չի գիտցուիր թէ՛ ին-  
չո՞ւ այն ատենուան տեղական  
միակ հայ թերթը « Լուսաբեր » ալ  
այդ մասին խորունկ լուծութիւն մը  
պահեց . . . .

Այսօր մէկ քանի հայերու շուր-  
ջը դարձող և ազգային ընդհան-  
րական գոյն սննցող հարց մը երբ  
Ամերիկեան թերթի մը մէջ կը  
կարդացուի, պատշաճ է որ ընդու-  
նինք թէ, այդպիսի ծանրակշիռ  
խնդիր մը տեղւոյն վրայ քննուիլը  
ու ձեռնուիլը աւելի բանաւոր պիտի  
ըլլար, գալթակիցը պատրաստ  
միտքերը հանդարտեցնելու համար :

ՏԵՂԱԿԱՆ  
ԼՈՒՐ

ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ

Շաբաթ առաւօտ Բարձր. Խը-  
տիվը Ապտինի պալատին մէջ ուն-  
կնդրութիւն շնորհեց Անգլ. կառա-  
վարութեան ներկայացուցիչ Սըր Էլ-  
տըն Կորսթի որ իր դէպի Սուտան և  
վերին եգիպտոս ըրած քննական  
պտոյտէն նոր վերադարձած էր :

ՊԱՐԱՀԱՆԳՈՒԹ

Մեծ պարահանդէսը՝ որ ամէն  
տարի ն. Բարձրութիւն Խտիվը Ապ-  
տինի պալատին մէջ կը սարքէ, ա-  
ռաջիկայ Փետրվար ամսոյ 10ին տեղի  
պիտի ունենայ :

Ն. Բարձրութիւնը անձամբ պի-  
տի տայ առ այդ կատարելի պատ-  
րաստութեանց մանրամասն հրա-  
հանգները :

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ռիւրադիտ կը գրէ թէ՛ Ոստի-  
կանական նոր ջակատ մը պիտի կազ-  
մակերպուի, որ Գահիրէի ոստիկա-

նութեան հրամանատար Մէնսֆիլտ  
Բաշայի ուղղակի հսկողութեան ներ-  
քե պիտի դրուի :

Այս կարգադրութիւնը այն  
չարժառիթով եղած է որ կըսէ նոյն  
թերթը, անցեալ երեքշաբթի Գլոս  
Պէյ Բաթիարի Օրինակալի քովիկը  
գործուած ոճրի մը պահուն ոստի-  
կան մը իսկ գտնուած չէ ձեռքա-  
կալելու համար ոճրագործը, որ ա-  
ռանց ո՛ր է արգելքի հանդիպելու  
կծիկը դնել յաջողած է եղեր :

ՍՈՒՑԱՆ

Ընթացիկ ամսոյ 14ին Գահի-  
րէէն թաղայլ լրագրին ուղղուած հե-  
ռագիր մը, Բրիտանական Կառավա-  
րութեան եգիպտոսի ներկայացուցիչ  
Սըր Էլտըն Կորսթի դէպի վերին ե-  
գիպտոս և Սուտան վերջերս ըրած  
ճամբորդութեան վրայ տեղեկու-  
թիւններ տալով՝ կը յաւելուի :

« Անգլիական Կառավարութեան  
ներկայացուցիչը կը հաստատէ որ՝  
Սուտանի մէջ 1901էն ի վեր բարոյա-  
կան և արհեստական ճիւղերը արտա-  
կարգ յառաջադիմութիւն մը ունե-  
ցած են, և կը վկայէ թէ՛ Սէրտարին  
և ուրիշ եգիպտացի ու Անգլիացի  
պաշտօնատարներուն անխոնջ ջան-  
քերը ու գործունէութիւնը ամէն  
տարակոյս վեր արգիւնքներ աը-  
ւած են : »

« Ինչ որ ամենէն աւելի սչքա-  
ուու է, կը յարէ վերոյիշեալ հեռա-  
գրին հեղինակը, այն է թէ՛ Սըր  
Էլտըն - Կորսթի նկատած է որ՝ Սու-  
տանցիները հանդէպ Անգլիացի պաշ-  
տօնատարներու լաւ վերաբերում և  
կատարել վստահութիւն կը տածեն,  
այնպէս որ կառավարութեան և կա-  
ռավարեալներուն միջև փոխադարձ  
սերտ կապ մը հաստատուած է բոլոր  
Սուտանի մէջ : »

« Սըր Էլտըն Կորսթի յայտա-  
բարած է թէ՛ տեղացիները աշխա-  
տութեան վարժուած են և յատկա-  
նշական ձեռնհասութիւն ցոյց կու-  
տան. միւս կողմէ ընդհանուր հա-  
կում մը կը տեսնուի արհեստներ մը-  
շակելու ճիւղին մէջ՝ ինչ որ փայլուն  
ապագայ մը կրնայ խոստանալ Սու-  
տանի համար : »

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

Եգիպտական կառավարութիւնը  
չըջաբերականներ զրկեց բոլոր տե-  
ղերու Կառավարիչներուն, անոնց  
ուշադրութիւնը հրաւիրելու համար  
հետեւեալ առողջապահական միջոց-  
ներուն վրայ, որոնք պէտք է գոր-  
ծագրուին ուխտաւորներու վերա-  
դարձին ատեն :

Ա. - Ուխտաւորները Սուէզ հաս-  
նելուն պէս՝ արձանագրել անոնց  
անունները պատկանեալ տետրին մէջ  
որ առողջապահական քննիչներու և  
ստիկանատանց պիտի զրկուին :

Բ. - Օմէնները պարտաւոր են  
անմիջապէս ոստիկանութեան հա-  
ղորդել իրենց գիւղաքաղաքէն մեկ-  
նող ուխտաւորաց անունները :

Գ. - Իւրաքանչիւր ոստիկանատան  
առողջապահական քննիչը վերադար-  
ձող ուխտաւորաց քննական այցե-  
լութիւն տալէ յետոյ, որսեալ տետ-  
րին մէջ պարտի արձանագրել իր

այցին թուականը և ձեռք բերած  
արգիւնքը :

Դ. - Այս այցելութենէն՝ յա-  
պաղման պատճառներով զուրկ մնա-  
ցող ուխտաւորը, օմէնին կողմէ պէտք  
է ներկայացուի ստիկանութեան, ո-  
րոշուած բժշկական այցելութեան  
ենթարկուելու համար :

Ե. - Շաբաթ մը յետոյ՝ այդ մի-  
կնոյն այցեալները վերստին պէտք է  
ենթարկուին բժշկական քննու-  
թեան :

Զ. - (Օմէնները պէտք է ծանու-  
ցանեն, վերոյիշեալ բժշկական երկ-  
րորդ այցէն առաջ մեռնողներուն և  
հիւանդներուն պատճառները : Ոչ  
մէկ մեռած պիտի կրնայ թողուիլ  
առողջապահական քննիչին այցելու-  
թիւնը ընդունելէ և մահուան պատ-  
ճառները հաստատուելէ առաջ :

Բոլոր մեռածներուն և ուխտա-  
ւորներուն մէջ պատահած դէպքե-  
րուն մանրամասնութիւնները հեռա-  
գրաւ պէտք է հաղորդուին Գահիրէի  
Առողջապահական Վարչութեան :

ՉՈՒՐԻ ԻՆԴԻՎԸ

Մեր նախորդ թիւով տեղական  
թերթերու տրուած տեղեկութեանց  
վրայ յենլով՝ ծանուցինք թէ՛ բըն-  
նիչ մասնախումբ մը կազմուած էր  
ուսումնասիրելու համար այն տեղե-  
կագիրները, որոնք ասկէ առաջ ու-  
տար մասնագէտներու կողմէ տրուած  
էին Ռօտ - Էլ - Փարսի արթէզեան  
հօրերու պարունակած ջուրերուն  
առողջապահական հանգամանքին վը-  
րայ :

Ն. Վսեմութիւն Պօղոս Բաշա  
Նուպար, որ այդ քննիչ մասնախում-  
բին աշխատութեանցը մասնակցելու  
համար եգիպտական կառավարու-  
թեան կողմէ պաշտօն ունէր, կը  
լսենք թէ՛ վերջերս իր հրատարա-  
կանը մատուցած է, պատճառաբա-  
նելով որ ինք՝ իբրև Վարչական  
խորհրդոյ նախագահ Ջուրի Ընկե-  
րութեան, քննիչ մասնախումբին աշ-  
խատութեանցը մասնակցելով, սխալ  
հասկացողութեանց տեղի կրնայ  
տուած ըլլալ :

Բանի որ ջուրի ընկերութեան  
վերոյիշեալ տեղեկութիւնները հա-  
ղորդեցինք, շահեկանութենէ զուրկ  
չ'պիտի ըլլայ քանի մը խօսք ալ ա-  
նոր նիւթական առաւելութիւննե-  
րուն մասին ընելը, ապացուցանելու  
համար թէ՛ հրապարակին վրայ տի-  
րող նիւթական անձկութիւնը ո՛ր է  
ազգեցութիւն գործած չէ Ջուրի Ըն-  
կերութեան տարեկան հասոյթնե-  
րուն վրայ :

Պոստ էթիքսիէնի առևտրական  
բաժնին մէջ հետեւեալ տեղեկու-  
թիւնները կը գտնենք այդ մասին :  
Ջուրի Ընկերութիւնը 1907 տար-  
ւոյ շրջանին մէջ մուտք ունեցած է  
179,199 եգիպտ. սակի. նախորդ  
1906 տարւոյ մտից գումարէն 18,231  
սակի աւելի :

Սովորական ծախքերը միկնոյն  
շրջանին մէջ եղած են 51180 սակի,  
որ նախորդ տարւոյ ծախքերուն վը-  
րայ 4604 եգ. սակիի առաւելու-  
թիւն մը կը ներկայացնեն, զոր զեղ-  
ջելով նոյն տարւոյ զուտ հասոյթէն  
13617 սակւոյ զուտ շահ մը կը մնայ  
Ընկերութեան :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Բարից 22 Յունուար. - Պ. Գր-  
չեմանսօի կաշորդուած է րե՛ Զօրա-  
վար Անաս Կրաման usացած է Շա-  
խասներուն հետ կարգադրութեան  
յանգիլ :

Յրանսու երկու սուրբաներուն  
միջև յեզոքութիւն պիտի պահէ :

Պերիլն 22 Յունուար. - Ռայ-  
խոսակին մէջ ընկերվարականները  
հարցապնդում մը րիկն, որուն հե-  
տեւեւոք ընդհարումներ տեղի ունե-  
ցան. Իշխան Պիլոյի ևր կառավա-  
րական րոյր պաշտօնեաները՝ իր  
րոյրի արսալայսութիւն խորհրդա-  
րանէն մեկնեցան :

Պերիլն 22 Յունուար. - Գոր-  
ծադրոյ քանուներու ի նպաստ րե-  
կերվարներու կարգադրութեան ինք  
գումարումներ տեղի ունեցան, որուն  
կր մասնակցեցին աւելի քան 12,000  
հոգիներ :

Որոշումներ քանակեցան, ո-  
րոցով կր պահանջուի գործաւոր-  
ներուն քառաւորեան դարման մը  
սարուելու համար անոնց վիճակուած  
աշխատութեանց անմիջապէս իրենց  
տրուելը :

Բոյր համախմբումներն ալ ա-  
մենակասարեալ կարգապահութեան  
տեղի ունեցան. Արիւնակեղութեան  
պատճառները տրուեցան ոստիկա-  
նութեան կողմէ որ անխաւայ ցուցա-  
բարներուն վրայ քալեց :

Բարից 23 Յունուար. - Թորֆ-  
եպարսիկ վեճը երբայով կր ծան-  
րանայ. նոր կենտրոնութիւններու եր-  
կիւղ կայ. Թորֆիս նոր գործեր կր  
դրիէ դէպի սանահանագրիս :

Լոնտոն 24 Յունուար. - Մանս-  
րանասերներուն և քանուներուն մէջ  
քանակցութիւնները վերական. Նը-  
պասարու հետեւեւոք մը կր յու-  
սացուի :

Լոնտոն 24 Յունուար. - Տարի-  
ներէ հետեւ անկեր չ'ստեղծուած մշուշ  
մը ծածկած է Մանչի ծովը. նա-  
ւարկութիւնը անհետարիս դժուարու-  
թեանց կր քալիսի :

Լոնտոն 24 Յունուար. - Կր ծա-  
նուցուի րե մօտ օրերու մէջ աշխա-  
սարներու գումարում մը տեղի պի-  
տի ունեցայ, հակա - ընկերվարա-  
կան կազմակերպութիւն մը ստեղծե-  
լու նպատակաւ :

Հոու 24 Յունուար. - Ասիա-Ա-  
պասայի Իսաիոյ ներկայացուցիչին  
կողմէ տրուած հեռագիր մը կր ծա-  
նուցանէ րե՛ հրամանատար Մօշի-  
նարի սպանումը և Լիւիսի մօտերը  
տեղի ունեցած ընդհարումին մէջ :

Մարտի 25 Յունուար. - Լոնտ  
Միլիտեր վարչ եգիպտոս կր մեկնի-  
Պանգ - ՕԷ - Էթիքսի հետ գործի մը  
կարգադրութեան հետ կապ ունիսլայ  
ճանարդութիւնը :

ԱԶԳ

ԱՐՇԱԼՈՅՍ ձեռքէ կը ծախուի  
Տիար Գրիգոր Տամպահեանի քով  
ի Պէն Էլ Սուրէն, հատը 20 փարայ  
ողջի :

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ

ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՋՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

Արեւելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան զներով սնունդու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չկայ հոս ու հոն ժամադաճող ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնիչին :

Պարտական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բայց մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ զնելը պարզապէս սխալիլ է :

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրատօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն . ԵՒ Ա . ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

## ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅՍՅՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշդ դիմաց . Գաֆէ Տը Լա Պուրսի կից

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՍԱՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՄԻՆԿԸՐներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :


400 և աւելի վիպակներ և մեքանիզմներ վարձատրուած, երաշխաւորուած մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .  
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ  
ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՐԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ  
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՄԻՆԿԸՐ յատկանշիմ



Ձրի դասեր և նորոգութիւններ, ՄԻՆԿԸՐ մեքենայից համար, յաճախողաց տուններուն մէջ :

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիւներու և նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

### ՏՕՔՔ ԵՍՔԷՐ Լ . ՃԷՔՕՔԵԱՆ

ՇԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ, ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և սնունդի հիւանդանոցներու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վիրահատ՝ ենթակային առանց ցաւ պատճառելու :

Մանկարարձուհի և մասնագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և ախրողիտեան ախտերու, իսկ մասնաւորներուն՝ ամէն տեսակ հիւանդութիւններու :

Կատարեալ խնամքով և գիտական նորագոյն մեթոտներու շնորհիւ հիւանդացիս կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները :

Հիւանդ կ'ընդունի առկն օր առաւօտեան ժամը 9-11 ևս կիս օրկ յետոյ 2-5

Ամէն երեւոքքի ազատաց ձրի պարմանում :

### ԾԱՍՈՒԻ ԳԻՐՔԵՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄՍՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1	Թըքուհին	50	սանթիմ
« 2	Հիւլին	50	»

Ժողովուրդին Մատենագարանի գրքոյկներուն հեղինակն է Տ . Ա . Պալեան, եղիպտացաց քաջ ծանօթ իր հրատարակութիւններով և յօդուածներով : Թրիւնին պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, և Հիւլին եղիպտագիր հայութեան առաջին օրերուն մի մանրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով : Դիւնի « Արշարյս » խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հետեւեալ հասցէով :

A. BALLIAN  
(Egypte) Le Gaire

## Տ Պ Ա Ր Ա Ն

### ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ

### ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է Ի ՇԱՐԱ ԱՊՏ-ԷԼ - ԱՉԻՉ  
ՇԷՐԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԷՉԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի տպագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ . Նամակագրուի, աղբարարութիւններ, այցելարտեր, մահաղբներ . գրքերու և պրոչիւրներու տպագրութիւններ և այլն . Յանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէսը կանխիկ է, իսկ մնացեալ կէսը յետ տպագրութեան՝ յանձնման պահուն վճարելի : Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտագործեամբ պիտի կատարուին :

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ

## Ե Ր Ե Ի Ա Կ

### ՉԱԻԵՅՏԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ՏԵՏՐԱԿԻ ԶԵՒՈՎ 16 ԷՉԵՐԷ ԲԱՂԿԱՅԱԾ

Ա - ԹՔՔԸ ՀՐԱՊԱՐԱԿ ՊԻՏԻ ԵԼԷ 1908 ՄԱՐՏ 1 ԹՅ

Բաժնեկիւր առկն տեղի համար ԵՐԵՔ Փր. ԿԱՆԿԻԿ : Ձեռքի Հասցը ՄԷՋ ԴԱՀ. ՈՂՁ. Հասցէ՝ Rédaction de la Revue « BREWAK » Chareh Abd el Aziz Le Caire